ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, քաղաք Մարալիկ,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 844-Ա
02 հոկտեմբերի 2024 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ՆՈՐԵՐՈՎ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կողմից 2024 թվականի մայիսի 05-ին և սեպտեմբերի 18-ին հայտարարվել են համապատասխանաբար ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/16, ՇՄԱՆՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/19 ծածկագրերով էլեկտրոնային աճուրդի միջոցով երկաթյա խողովակների ձեռքբերման հայտարարություններ և հրավերներ, սակայն երկու դեպքում էլ ընթացակարգերը հայտարարվել են չկայացած, քանի որ մասնակիցներ չեն եղել: Երկաթյա խողովակները նախատեսված են ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հաղթանակ, Ձերժինսկի փողոցների և Ազատության հրապարակի արտաքին լուսավորության հին խողովակների փոխարինման համար: Քանի որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարալիկ քաղաքի Հաղթանակ, Ձերժինսկի փողոցների և Ազատության հրապարակի հիմնովին ասֆալտապատման աշխատանքները հասել են վերջնական փուլին, նշված խողովակների տեղադրման հատվածները պետք է փակվեն և ասֆալտապատվեն, նշված խողովակների փոխարինումն համարվում է անհետաձգելի, ուստի անհրաժեշտ է կատարել տվյալ խողովակների ձեռքբերում: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդված 1-ին մասի 24-րդ կետի, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի դ) պարբերության դրույթներով.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի երկաթյա քառակուսի խողովակների և արտաքին լուսավորության համար նախատեսված ամրակների ձեռքբերման նպատակով կազմակերպել հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման գործընթաց, քանի որ ժամանակի առումով գնման այլ ձևերի կիրառումը անհնար է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ
/պարտականությունները կատարող/

«**02**» հոկտեմբերի 2024 թվական
Քաղաք Մարալիկ